ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՄԱՐՄԻՆ
ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION-DASHNAKTSUTYUN
SUPREME COUNCIL OF ARMENIA

27/03/2026թ.
N -004

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ավինյան

Հայտնում ենք Ձեզ, որ Հայոց ցեղասպանության 111-րդ տարելիցի կապակցությամբ ՀՅԴ Հայաստանի երիտասարդական միությունը 2026թ. ապրիլի 23-ին նախատեսում է կազմակերպել ավանդական դարձած «Ջահերով երթ»:

Միջոցառումը սկիզբը նախատեսվում է ապրիլի 23-ին, ժամը 18:00-ին Հանրապետության հրապարակում: Ժամը 20:30-ին երթի մասնակիցները հուշահամալիր կշարժվեն՝ Հանրապետության հրապարակ-Ամիրյան փողոց-Մաշտոցի պողոտա-Բաղրամյան պողոտա – Բարեկամության կամուրջ-Կիևյան փողոց- Ծիծեռնակաբերդ երթուղով:

Միջոցառումը կավարտվի մինչև ժամը 24:00-ը Ծիծեռնակաբերդի հուշահամալիրում:

Մեր կանխատեսմամբ երթին կմասնակցեն 10-15 հազար երիտասարդներ:

Նախաձեռնությանը մասնակցելու պատրաստակամություն են հայտնել մի շարք ուսանողական, երիտասարդական և հասարակական կազմակերպություններ:

Հանրային հավաքի ընթացքում օգտագործվելու է բեմ, էկրան և գեներատոր, հրապարակում անհրաժեշտ կլինի հինգ բեռնատարներ, որոնց մեջ կլինեն կանթեղները և վեց էվակուատոր, որոնց վրա կլինի ձայնային տեխնիկա և ջուր:

Երթի ընթացքում կօգտագործվեն ջահեր, մոմեր, դրոշներ, պաստառներ և ձայնային տեխնիկա: Նախատեսում ենք շուրջ 100 կարգադրիչներ, ովքեր կապահովեն անվտանգությունը:

Հավաքի և երթի ղեկավարումը հանձնարարել ենք Ժորա Մելիքսեթի Ավդալյանին::

Խնդրում ենք Ձեր աջակցությունը:

ՀՅԴ Հայաստանի ԳՄ Ներկայացուցիչ
Իշխան Սաղաթելյան

Հանրապետության 30, Երևան, Հայաստան, 0010 Հեռ: +374-10-52-15-02, Էլ-փոստ: hydgm1890@gmail.com Կայք: http://www.arfd.am
Hanrapetutyun 30, Yerevan, Armenia, 010 Tel: +374-10-52-15-02, E-mail: hydgm1890@gmail.com, Website: http://www.arfd.am